ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 4, հեռ.՝ (+374 60) 830 – 840, (+374 60) 830 850
Էլ-փոստ՝ info@competition.am, վեբ կայք՝ http://www.competition.am

«10» 12 20 24թ.
No 014657

«ՍԱԱՄ-ԱՈՒԴԻՏ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ

ՊԱՐՈՆ ՏԻԳՐԱՆ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ

(Հասցե՝ ՀՀ, ՀՀ, Արարատի մարզ, ք. Վեդի, Արարատյան փող., շ. 55

Էլ. հասցե՝ saam-audit-group@mail.ru, հեռ. + 374 77 30 27 46)

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Հարգելի պարոն Հակոբյան,

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի (այսուհետ նաև՝ **Հանձնաժողով** կամ **Պատվիրատու**) և «ՍԱԱՄ-ԱՈՒԴԻՏ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ նաև՝ **Կատարող**) միջև 2024 թվականի ապրիլի 15-ին ներքին աուդիտի ծառայությունների (այսուհետ նաև՝ **Ծառայություններ**) մատուցման նպատակով կնքվել է թիվ «ՄՊՀ-ԷԱՃԾՁԲ-24/17» պայմանագիրը (այսուհետ նաև՝ **Պայմանագիր**):

Պայմանագրով Կատարողը պարտավոր է իրականացնել Հանձնաժողովի իրավաբանական վարչության, անբարեխիղճ մրցակցության վերահսկողության վարչության, անձնակազմի կառավարման բաժնի և գնումների գործընթացի համապատասխանության աուդիտ:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան, իսկ նման պայմանների ու պահանջների բացակայության դեպքում՝ գործարար շրջանառության սովորույթներին կամ սովորաբար ներկայացվող այլ պահանջներին համապատասխան:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Վերոգրյալից հետևում է Կատարողի պարտավորությունը Ծառայությունը մատուցելու օրենսդրությամբ և պայմանագրով սահմանված կարգով:

Այսպես, Պայմանագրի վերջնաժամկետն է 2024 թվականի դեկտեմբերի 25-ը, մինչդեռ Պայմանագրի կնքումից հետո Կատարողը չի ներկայացել Հանձնաժողով և փաստացի մինչև սույն ծանուցման օրը չի իրականացրել Ծառայության մատուցմանն ուղղված որևէ գործողություն: Մասնավորապես՝ Պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող տեխնիկական բնութագրի «Ծառայության ընդունման և վճարման ժամանակացույցը» վերտառությամբ 6-րդ գլխով, ի թիվս այլնի, նախատեսված է Կատարողի կողմից սահմանված ժամկետներում եռամսյակային հաշվետվությունների ներկայացման պարտականությունը:

Մինչդեռ, Կատարողի կողմից Պայմանագրի կնքման օրվանից մինչ սույն ծանուցման օրը չի կատարվել Ծառայության մատուցմանն ուղղված որևէ քայլ: Հաշվի առնելով Պայմանագրի առարկան՝ Կատարողը Ծառայության պատշաճ մատուցման շրջանակում պետք է ներկայանար Հանձնաժողով, ծանոթանար համապատասխանության աուդիտի ենթակա միավորների հետ և իրականացներ համապատասխան գործառույթներ:

Նման պայմաններում Կատարողի կողմից մինչ սույն ծանուցման օրը եռամսյակային հաշվետվություններ չներկայացնելը, Հանձնաժողով չներկայանալը, փաստացի ներքին աուդիտի միջավայրին և համապատասխանության աուդիտի ենթակա միավորներին չծանոթանալը և դրան ուղղված որևէ քայլ չձեռնարկելը ողջամտորեն ակնհայտ են դարձնում առհասարակ Ծառայության մատուցման անհնարինությունը:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 2-րդ մասի 1-ին կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

Ողջ վերոգրյալից հետևում է, որ Կատարողը թույլ է տվել Պայմանագրի էական խախտում՝ Պայմանագրի կնքման պահից մինչ սույն ծանուցման օրը չի մատուցել որևէ Ծառայություն և չի կատարել դրան ուղղված որևէ քայլ, որի հաշվառմամբ՝ Պատվիրատուն միակողմանի լուծում է Պայմանագիրը:

Տեղեկացնում ենք նաև, որ Կատարողը Պայմանագրի 5-րդ մասի 3-րդ կետի համաձայն պարտավորվում է վճարել տույժ Պայմանագրի 4-րդ մասի 1-ին կետով նախատեսված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով՝ 89 012 << դրամ (2024 թվականի դեկտեմբերի 9-ը ներառյալ), սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում Ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին:

Միևնույն ժամանակ, «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Սույն մասում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

Ընդ որում, եթե՝

- **սույն կետով նախատեսված՝ լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է պայմանագրի և (կամ) որակավորան ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին.**

- **մասնակցի կամ պայմանագիրը կնքած անձի կողմից պայմանագրի և (կամ) որակավորան ապահովման գումարի վճարումն իրականացվել է լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան մասնակցին կամ պայմանագիր կնքած անձին ցուցակում ներառելու վերջնաժամկետը լրանալու օրը, ապա պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:**

Սույն ծանուցումը Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 526-Ն որոշման (այսուհետ նաև՝ **Կարգ**) 33-րդ մասի 17-րդ կետի, ինչպես նաև Պայմանագրի 7-րդ մասի 9-րդ կետի համաձայն հրապարակվում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում:

Միևնույն ժամանակ տեղեկացնում ենք, որ Կարգի 33-րդ մասի 17-րդ կետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ԱՇՈՏ ՎԱՀԱՆՅԱՆ